

1.7. ՇՎԵՅՑԱՐԻԱ. ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆԸ

ԵՎԳԵՆՅԱ ՀԱԿՈԲՅԱՆ

25.07.2021-27.09.2021

Ներածություն

Շվեյցարիայի տնտեսությունը համարվում է աշխարհում ամենակայուն տնտեսություններից մեկը: Շվեյցարիան զարգացած արդյունաբերական երկիր է՝ ինտենսիվ գյուղատնտեսությամբ և հանքանյութերի գրեթե լիակատար բացակայությամբ: Ուսումնասիրելով Շվեյցարիայի տնտեսությունը բնութագրող մի շարք ցուցանիշներ, ինչպես նաև տարբեր մասնագետների աշխատություններ՝ կարելի է եզրահանգել, որ Շվեյցարիայի տնտեսությունը աշխարհում ամենալիբերալ և մրցունակ տնտեսություններից մեկն է: Արդյունաբերության առավել զարգացած ճյուղերն են մետաղի վերամշակումը, մեքենաշինությունը, համակարգչային տեխնիկայի, ժամացույցների արտադրությունը և այլն: Հայաստանի տնտեսության զարգացման ներկայիս փուլում շատ կարևոր է առաջավոր երկրների փորձի ուսումնասիրումն ու դրա արդյունավետ կիրառումը: Տվյալ հոդվածի թեմայի **արդիականությունն էլ** պայմանավորված է հենց այդ հանգամանքով: Սույն հոդվածի **նպատակն** է ուսումնասիրել Շվեյցարիայի տնտեսությունը, դրանում կատարված փոփոխությունները, հաջողության գրավականը և ներկայացնել դրանց տեղայնացման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում: Տվյալ նպատակին հասնելու համար հոդվածում դրվել են հետևյալ **խնդիրները**՝

- ուսումնասիրել և ներկայացնել Շվեյցարիայի պատմությունը,
- ներկայացնել երկրի հիմնական առանձնահատկությունները,
- վերլուծել տնտեսության շարժիչ ուժերը կամ հիմնական ճյուղերը,
- կատարել համեմատական վերլուծություն Հայաստանի Հանրապետության տնտեսության հետ,
- ներկայացնել Շվեյցարիայի տնտեսության հաջողության գրավականը դարձած փորձի ներդրման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում:

Գրականության վերլուծություն

Շվեյցարիայի տնտեսության զարգացման, ինչպես նաև նրա առանձնահատկությունների մասին են գրվել մի շարք աշխատություններում: Մասնավորապես՝ Յու. Ի. Յուդանովը իր «Շվեյցարական ձեռնարկատիրության առանձնահատկությունները» հոդվածում նշել է. «Ավելի քան մեկ տասնամյակ այդ երկիրը ոչ միայն սոցիալական կայունության, այլ նաև արտադրության կայուն արդյունավետության առումով համարվում է յուրօրինակ միջազգային չափանիշ, որն էլ նրան ապահովում է ժամանակակից աշխարհում կենսամակարդակի առումով ամենաբարձր տեղերից մեկը: Այդ ձեռքբե-

րումները հնարավոր դարձան ձեռնարկատիրության առաջատար մոդելների անընդհատ որոնման և ներդրման արդյունքում, որոնք առավելագույնս ապահովում են գլոբալ տնտեսության և համայնքի ռազմավարական տեղաշարժերին հարմարեցումը¹:

Ինչպես նկատում է Ս. Լ. Ավրամենկոն «Շվեյցարական ֆեդերալիզմ» աշխատության մեջ. «Բազմազգ ֆեդերատիվ պետության դասական օրինակ է հանդիսանում Շվեյցարիան: Ուղիղ ժողովրդավարության համակարգին զուգընթաց, որը քաղաքացիներին ընտրությունների և երկրի կյանքի ամենակարևոր հարցերի շուրջ ժողովրդական կանոնավոր քվեարկությունների միջոցով հնարավորություն է ընձեռում լայնորեն մասնակցել պետական գործերի որոշմանը, ֆեդերալիզմի սկզբունքը հանդիսանում է Շվեյցարիայի քաղաքական կառուցվածքի հիմնաքարերից մեկը²:

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Ե. Մ. Պրիմակովի անվան համաշխարհային տնտեսության և միջազգային կապերի ազգային հետազոտական ինստիտուտի և Եվրոպական հետազոտությունների կենտրոնի գլխավոր գիտաշխատող Օ. Ե. Տրոֆիմովան «Շվեյցարիայի ներդրումային քաղաքականությունը Ռուսաստանում սանկցիաների կիրառումից առաջ և հետո» աշխատության մեջ նշում է, որ Շվեյցարիայի տնտեսական հաջողությունը հիմնված է երեք գործոնների վրա՝ գիտություն, կրթություն և բարձր տեխնոլոգիաներ: Թվային տեխնոլոգիաների լայն ներդրումը Շվեյցարիայի տնտեսության զարգացման կարևոր ուղղությունն է դարձել: Իսկ մրցունակ առավելություններն են ծառայությունների ոլորտը, բարձր որակավորում ունեցող աշխատուժը և բանկային համակարգը³:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է ենթադրել, որ **թեմայի ուսումնասիրվածության աստիճանը** բավարար մակարդակի վրա է:

Հետազոտության մեթոդաբանություն

Սույն հոդվածի համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել մասնագիտական գրականությունն ու տարատեսակ աշխատությունները, էլեկտրոնային նյութերը, գիտաժողովներում հրապարակած գիտական հոդվածները: Վերլուծության ընթացքում օգտագործվել են Համաշխարհային բանկի, ՏՀԶԿ երկրների, ինչպես նաև այլ միջազգային տեղեկատվական հարթակներում տեղ գտած թվային տվյալները: Հետազոտության ընթացքում կատարվել են համակարգային և իրավիճակային, տնտեսամիջակագրական խմբավորումների, համեմատական և գործոնային վերլուծություններ:

¹ Юданов Ю. И., Особенности швейцарской предпринимательской модели. Современная Европа. 2003. № 1 (13), с. 60. <http://www.sov-europe.ru/images/pdf/2003/1-2003/yudanov1-2003.pdf>:

² Авраменко С. Л., Швейцарский федерализм, 2002 г., 197 стр, <https://www.disserscat.com/content/shveitsarskii-federalizm>

³ Трофимова О. Е. Инвестиционная политика Швейцарии в России до и после введения санкций. Современная Европа. 2018, № 6 (85), с. 126.

Հիմնական վերլուծություն

Շվեյցարիան ձևավորվել է պատմական, սոցիալական և աշխարհագրական երկարաժամկետ գործընթացների արդյունքում¹: Շվեյցարիայի Համադաշնությունն ու նրա պատմությունը վառ օրինակ են այն բանի, թե ինչպես կարելի է մեկ քաղաքական միավորման շրջանակներում համատեղել մեկ միութենական պետության շահերը կյանքի բազմաթիվ ոլորտներում նրա տարածաշրջանների նշանակալի անկախության հետ²: Շվեյցարիայի տնտեսական զարգացումը սկսվել է ավելի քան 200 տարի առաջ՝ չնայած այն հանգամանքին, որ մետաքսի արդյունաբերությունը Ցյուրիխում և Բազելում ծաղկում էր դեռևս 16-րդ դարում, ժնևը ժամացույցների արտադրության կենտրոն էր 17-րդ դարում, և այդ պարագայում աշխատունակ բնակչության 80 տոկոսը զբաղված էր գյուղատնտեսության մեջ մինչև 1650 թ.³: Երկրում արդյունաբերության զարգացման կարևոր փուլ էր տեքստիլ արդյունաբերության կայացումը, որը ավելի զարգացավ մոտ 1700 թ.⁴: 18-րդ դարի կեսերին Շվեյցարիայում հիմնվեցին մասնավոր բանկեր, որոնք ֆինանսավորում էին արդյունաբերությունն ու միջազգային առևտուրը: Առաջին խնայողական բանկը ստեղծվել է Բեռնում 1787 թ.: 1818 թ. այդ բանկերը բավականին ճանաչված էին, իսկ 1840 թ. արդեն բնակչության մեկ շնչի հաշվով Շվեյցարիայում ավելի շատ էին բանկերը, քան մեկ այլ պետությունում⁵: Ցածր հարկային դրույքաչափերը և ազատ առևտուրը Շվեյցարիայի տնտեսության զարգացման հիմնական գործոններն են դարձել⁶: Տարբեր հեղինակներ Շվեյցարիայի հաջողության տարբեր պատճառներ են նշում: Օրինակ՝ ըստ Գ. Հաբերմանի⁷՝ Շվեյցարիայի հաջողության հիմնական պատճառներից է, առաջին հերթին, իրական ժողովրդավարությունը: Աշխարհի ոչ մի երկրում քաղաքացիները

¹ Кубли О., Швейцарское "чудо": одно государство, две официальные религии, четыре национальных языка, 26 кантонов, 2500 общин – и все это на 8 миллионов жителей и немногим более 40 тысяч квадратных километров. И однако это работает, причем даже очень неплохо!..., стр. 105.

² Модернизация экономики и самоуправления в республиках Северного Кавказа и швейцарский опыт организации общества и экономики / Под общей редакцией Бабич И.Л., Вирт Ю.В., Мартыновой М.Ю. – М.: ИЭА РАН, 2013. стр 10, http://static.iea.ras.ru/books/Modernizatsia_ekonomiki_North_Caucasus.pdf

³ Рехманн Д., История развития экономики Швейцарии и важность швейцарского малого и среднего бизнеса. В сборнике: Россия и Санкт-Петербург: экономика и образование в XXI веке. Научная сессия профессорско-преподавательского состава, научных сотрудников и аспирантов по итогам НИР за 2014 год. Факультет экономики и финансов. Отделение национальной экономики. Научные редакторы: Л. А. Миэринь, А. И. Попов. 2015, с. 308.

⁴ Նույն տեղում:


⁵ Рехманн Д., История развития экономики Швейцарии и важность швейцарского малого и среднего бизнеса, стр 308.

⁶ Hardegger J., Das Werden der Modernen Schweiz. B.2: Die Schweiz im 20.Jh (1914-Gegenwart)/J. Hardegger, M.Bolliger, F.Ehler u.a.-Basel/Luzern:Riniger Print, 1989.-P.122

⁷ Haberman G., Seven Secrets of Swiss Success, [Электронный ресурс]: Credit Suisse. URL:<http://helloswitzerland.ch/-/seven-secrets-to-swiss-success>

ձայնի այնքան իրավունք չունեն, ինչքան Շվեյցարիայում է: Նրանք իրավունք ունեն լուծելու հարցերի մի ամբողջ խումբ՝ սկսած դատավորների ընտրությունից մինչև պետական պաշտոնյաները: Այստեղ ժողովրդավարությունը միայն խոսքով չէ ապացուցված: Շվեյցարիայում շատ զարգացած է փոքր և միջին ձեռնարկատիրությունը: Եվ, վերջիվերջո, Շվեյցարիայի տնտեսության հաջողության հիմնական գրավականն է դարձել նաև այն, որ երկրի տնտեսությունը բավականին դիվերսիֆիկացված է: Այստեղ արտադրվում է գրեթե ամեն ինչ, բացառությամբ ավտոմեքենաների¹:

Շվեյցարիայի ընդհանուր տարածքը 39,516,0 կմ² է², իսկ բնակչության թվաքանակը 2020 թ. դրությամբ կազմում է 8,636,896 մարդ³:



Գծապատկեր 1. Շվեյցարիայի ՀՆԱ-ն 2010-2020 թթ.⁴ (մլրդ ԱՄՆ դոլար)

Շվեյցարիայի հյուսիսային հարևանն է նրա հիմնական քաղաքական և տնտեսական գործընկերը՝ Գերմանիան, արևմուտքում Շվեյցարիան սահմանակից է Ֆրանսիային, հարավում՝ Իտալիային, իսկ արևելքում՝ Ավստրիային: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ, շրջապատված լինելով ԵՄ անդամ երկրներով և գտնվելով եվրոպական մայրցամաքի կենտրոնական մասում, Շվեյցարիան չի հանդիսանում ԵՄ անդամ, սակայն այն ԵՄ երկրների հետ քաղաքական, ֆինանսական, առևտրային և տնտեսական հարաբերությունների կարևորագույն մասնակից է: Շվեյցարիայի ՀՆԱ-ն 2020 թ.

¹ Рехманн Д., История развития экономики Швейцарии и важность швейцарского малого и среднего бизнеса, стр 312.


² <https://data.worldbank.org/indicator/AG.LND.TOTL.K2?locations=CH>

³ <https://data.worldbank.org/indicator/SP.POP.TOTL?locations=CH>

⁴ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=CH>

կազմել է 747.969 մլրդ ԱՄՆ դոլար¹ (տե՛ս գծապատկեր 1): Իսկ Հայաստանի ՀՆԱ–ն 2020 թ. կազմել է 12.6 մլրդ ԱՄՆ դոլար² (տե՛ս գծապատկեր 2):

Մեկ շնչին ընկնող ՀՆԱ–ի ցուցանիշը 2020 թ. Շվեյցարիայում կազմել է 86,601,6 ԱՄՆ դոլար³, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ 4,267,5 ԱՄՆ դոլար⁴: Գործազրկությունը Շվեյցարիայում 2020 թ. դրությամբ կազմել է 4.94, իսկ 2019 թ.՝ 4.39 տոկոս⁵, իսկ Հայաստանի Հանրապետությունը 2020 թ. ունեցել է գործազրկության երկնիշ ցուցանիշ՝ 20.21, 2019 թ. այն կազմել է 18.81 տոկոս⁶:



Գծապատկեր 2. Հայաստանի Հանրապետության ՀՆԱ–ն 2010-2020 թթ.⁷

Համեմատության համար աղյուսակի տեսքով ներկայացրել ենք Հայաստանի և Շվեյցարիայի զբաղեցրած հորիզոնականները համաշխարհային ռեյտինգներում (տե՛ս աղյուսակ 1):

¹ <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=CH>

² <https://www.worldbank.org/en/country/armenia/overview>

³ <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=CH>

⁴ https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?name_desc=false

⁵ <https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.ZS?locations=CH>

⁶ <https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.ZS?locations=AM>

⁷ <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD?locations=CH>

Շվեյցարիան ու Հայաստանը համաշխարհային ռեյտինգներում

<i>Ցուցանիշ ինդեքս</i>	<i>Տարեթիվը</i>	<i>Շվեյցարիայի գրադեցրած հորիզոնականը</i>	<i>Հայաստանի գրադեցրած հորիզոնականը</i>
Գլոբալ ինովացիոն ինդեքս ¹	2020	1	61
Բիզնեսի վարման դյուրինություն ²	2020	36	47
Մարդկային պոտենցիալի զարգացման ինդեքս ³	2019	2	81
Տնտեսական ազատության ցուցանիշ ⁴	2020	5	34
Մրցունակության միջազգային ռեյտինգ ⁵	2019	5	69

Ինչպես տեսնում ենք, համաշխարհային ռեյտինգներում Շվեյցարիան բավականին բարձր հորիզոնականներում է գտնվում, և այս առումով Հայաստանը շատ է զիջում նրան:

Գիտությունը Շվեյցարիայում.

Շվեյցարիայում բոլոր մակարդակների կրթական գործունեության կազմակերպումը պետության խնդիրն է: Պետությունը գիտությանն է հատկացնում ՀՆԱ-ի մոտ 2.6 տոկոսը, որը ՏՀԶԿ երկրների միջին մակարդակից բարձր է: Իսկ կրթությանն է հատկացվում ՀՆԱ-ի մոտ 5.2 տոկոսը: Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանում այդ ցուցանիշը 3 տոկոսից մի փոքր քիչ է, Ճապոնիայում՝ 3 տոկոս, Գերմանիայում՝ 4.5 տոկոս, ԱՄՆ-ում՝ 5.5 տոկոս⁶: Իսկ 2019 թ. Հայաստանի Հանրապետությունում գիտության ոլորտին է հատկացվել ՀՆԱ-ի 0.18 տոկոսը⁷, նախորդ տարվա (2018 թ.) 0.19 տոկոսի փոխարեն, որը բավականին ցածր ցուցանիշ է:

Շվեյցարիայում ընդունված է մի տեսակետ, ըստ որի՝ երիտասարդները քոլեջ կամ վարժարան ընդունվելու փոխարեն դպրոցական պարտադիր դասընթացի ավարտից հետո հնարավորություն ունեն սովորելու ձեռնարկությունում, որը համալրվում է դպրոցական պարապմունքներով: Բացի դրանից, լրացուցիչ մեկ տարի սովորելուց հետո ուսանողները հնարավորություն ունեն մասնագիտական կրթության դիպլոմ ստանալու, որը որոշ չափով ակադեմիական ավանդական դիպլոմին համապատասխան է և ուսանողին իրավունք է տալիս համալսարան ընդունվելու: Մասնագիտական կրթության դիպլոմը հնարավորություն է տալիս ընդունվելու Բարձրագույն մասնագի-

¹ https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2020.pdf

² https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2020.pdf

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

⁷ Հաշվարկը կատարվել է՝ հիմք ընդունելով ԱՎԾ տվյալները, հետևյալ սկզբունքով՝ գիտության ֆինանսավորում/ ՀՆԱ, https://armstat.am/file/article/sv_03_20a_112.pdf

տական դպրոցներ, որոնք անգլերեն ավելի հաջող անվանում են «Կիրառական գիտությունների համալսարան» (HES): Արդյունքում Շվեյցարիայում շատ անում են տարբեր բնագավառներում մասնագիտական բարձր որակավորում ունեցող անձինք: Ստացվում է այնպես, որ Շվեյցարիան բարձր մակարդակով պատրաստում է անհրաժեշտ մասնագետներ¹: Շվեյցարիայում պետությունը բավականին լավ է խթանում նաև մասնավոր հատվածում գիտության զարգացումը: Այդ առումով տեխնոլոգիաների և նորարարությունների գծով ստեղծվել էր պետական հանձնաժողով՝ Science to Market՝ Գիտությունը դեպի շուկա անվանմամբ: 2003 թվականից հաջողությամբ գործում է Շվեյցարիայի տեխնոլոգիաների փոխանցման ասոցիացիան՝ փոխանակելով գիտատեխնիկական տեղեկատվություն ազգային հետազոտական հաստատությունների և մասնավոր հատվածի միջև: Շվեյցարական բուհերին կից գործում է գիտահետազոտական գործունեության արդյունքների առևտրականացման հատուկ կենտրոն: Նման մոտեցումը փոքր տարածություն ունեցող Շվեյցարիան գիտական հետազոտությունների արդյունավետությամբ դարձրել է աշխարհում առաջատար²: Այստեղ տեղին է ժամանակակից Սինգապուրի առաջին վարչապետ Լի Կուան Յուի հանձարեղ միտքը. «...Եթե երկիրը սխալ կառավարեն, ապա տեղի կունենա խելացիների արտահոսք³»: Ուսումնասիրելով ՀՀ վիճակը՝ կարելի է եզրահանգել, որ մեր երկրից խելացի երիտասարդների արտահոսք է տեղի ունենում: Հայաստանի Հանրապետության կառավարությունն այստեղ անելիքներ ունի:

Հարկեր, հարկային բարեփոխումներ: Շվեյցարիան հայտնի է ցածր հարկային դրույքաչափերով և տուրքերով: Ընկերությունների և մասնավոր անձանց ցածր հարկային դրույքաչափերը միջազգային ընկերությունների կողմից Շվեյցարիայում գրասենյակներ հիմնելու ընտրության հիմնական պատճառներից մեկն է: Բացի ցածր հարկային դրույքաչափերից, կան նաև այլ առավելություններ, որոնք նպաստում են, որ Շվեյցարիայի հանրաճանաչ լինելուն, ներառյալ սահուն համագործակցությունը իշխանությունների և ընկերությունների միջև, կրկնակի հարկման պայմանագրերի լայն ցանցը և ավելացված արժեքի ցածր հարկը⁴: Քանի որ Շվեյցարիայի հարկային համակարգը արտացոլում է երկրի դաշնային կառուցվածքը, ընկերությունների համար արդյունավետ հարկային դրույքաչափերը տարբեր են յուրաքանչյուր կանտոնում՝ 11,91 %-ից մինչև 21,6 %: Դաշնային մակարդակում սահմանափակ ընկերությունների և գործընկերությունների համար ներկայումս կիրառվում է օրենքով սահմանված 8,5 % հարկային դրույքաչափ: Ասոցիա-

¹ http://static.iaa.ras.ru/books/Modernizatsia_ekonomiki_North_Caucasus.pdf

² <https://www.education-medelle.com/articles/visschee-obrazovanie-v-schvejtcarii-politika-gosudarstva.html>

³ <https://www.kp.ru/daily/26357.5/3239498/>

⁴ https://www.s-ge.com/sites/default/files/publication/free/factsheet-corporate-taxation-switzerland-s-ge-en-2020_0.pdf

ցիաները, հիմնադրամները և այլ իրավաբանական անձինք, ինչպես նաև ներդրումային հիմնադրամները հարկվում են 4,25 %-ով: Շվեյցարիայում ընկերություններն ու անհատները նույնպես շահում են իշխանությունների և ձեռնարկությունների միջև լավ հարաբերություններից, ինչպես նաև կրկնակի հարկման մի շարք պայմանագրերից: Ավելին, երկրի ԱԱՀ-ի դրույքաչափը երկրորդ ամենացածրն է Եվրոպայում՝ ընդամենը 7,7 %¹:

2019 թ. մայիսի 19-ին Շվեյցարիայում անցկացվեց հանրաքվե, որի արդյունքում հաստատվեց Կորպորատիվ հարկային բարեփոխումների և Շվեյցարիայում սոցիալական ապահովության բարեփոխումների մասին օրինագիծը (The Federal Act on Tax Reform and AHV Financing, TRAF)²: TRAF բարեփոխման համաձայն՝ Շվեյցարիայի հարկային օրենսդրությունում կատարվեցին հետևյալ հիմնական փոփոխությունները³

1. *արտոնյալ հարկային ռեժիմների չեղարկում և հատուկ «անցումային» կանոնների ներդրում:* Բանն այն է, որ Շվեյցարիան, արտոնյալ հարկային ռեժիմների առկայության հետ կապված, միշտ գրավիչ է եղել միջազգային խմբերի համար՝ հոլդինգային, առևտրային ընկերությունների, ինչպես նաև ֆինանսական գործունեություն իրականացնող օտարերկրյա ընկերությունների տեղական մասնաճյուղերի համար: Համապատասխան հարկային ռեժիմների կիրառությունը թույլ էր տալիս էականորեն իջեցնել արդյունավետ հարկային դրույքաչափը: 2020 թ. հունվարի 1-ից չեղարկվեցին տվյալ արտոնյալ հարկային ռեժիմներն, ու կիրառվեց ստանդարտ հարկային ռեժիմ: Սակայն այդ ընկերություններին իրավունք տրվեց առանց հարկային լրացուցիչ հետևանքների ընկերության հարկային հաշվետվություններում բացահայտելու արտոնյալ հարկային ռեժիմի կիրառման ընթացքում ձևավորված «թաքնված» պահուստները, ապա կիրառելու այդ ակտիվների մաշվածության նվազեցումներ՝ դրանով իսկ նվազեցնելով կորպորացիայի հարկային բազան (Step-up)⁴:

2. *Կանտոնային մակարդակում կորպորացիաների եկամտահարկի դրույքաչափի նվազեցում:* Քանի որ հարկային արտոնյալ ռեժիմների չեղարկումը ընթացիկ պայմաններում կարող էր հանգեցնել հարկային բեռի զգալի մեծացման, կազմակերպությունների մասսայական արտահոսքը կանխելու նպատակով Շվեյցարիայի կանտոնները ստանդարտ հարկային դրույքաչափերի նվազեցում են կատարել, մասնավորապես՝ կրճատման արդյունքում կորպորատիվ եկամտահարկի համախառն (դաշնային և կանտոնական) արդյունավետ տոկոսադրույքը կազմել է Ժնևում 13.99 տոկոս նախկին 24.16

¹ <https://www.s-ge.com/en/publication/fact-sheet/corporate-taxation>

² <https://www.s-ge.com/en/publication/fact-sheet/corporate-taxation>.

³ https://www.s-ge.com/sites/default/files/publication/free/factsheet-corporate-taxation-switzerland-s-ge-en-2020_0.pdf

⁴ Изменения в налоговом законодательстве Швейцарии

<https://home.kpmg/ru/ru/home/insights/2019/06/switzerland-tax-legislation-changes.html>

տոկոսի փոխարեն, Ցյուրիխում՝ 18.19, նախկին 21.15 տոկոսի փոխարեն, Տիչինոյում՝ 16.51, նախկին 20.55 տոկոսի փոխարեն¹: Այսինքն՝ կարելի է հետևություն անել, որ Շվեյցարիան ամեն ինչ անում է իր տնտեսությունը զարգացնելու, ընկերությունների արտահոսք թույլ չտալու համար:

3. *Արտոնությունների ընդհանուր սահմանափակում*: Չնայած բարեփոխման արդյունքում թույլատրվել է միաժամանակ մի քանի արտոնություններից օգտվել, դրանց մեծությունը չպետք է գերազանցի մաքուր շահույթի 70 տոկոսը, այսինքն՝ հարկային բազան պետք է կազմի 30 տոկոս: Իսկ կանտոններն իրավասու են հարկման ավելի բարձր շեմ հաստատելու: Շվեյցարիայի հարկային օրենսդրությունում բարեփոխումների շրջանակներում նախատեսված փոփոխությունների մեջ են մտնում նաև հատուկ հարկային արտոնությունների տրամադրում Շվեյցարիա «տեղափոխվող» ընկերությունների համար, ֆիզիկական անձ-բաժնետերերի համար հարկային բեռի ավելացում այսպես կոչված «որակյալ» ներդրումներից շահաբաժիններ ստանալիս և այլն²:

Հայաստանի Հանրապետությունում հարկային վերջին բարեփոխումներն իրականացվեցին 2018 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած հարկային նոր օրենսդրությամբ: Սակայն հարկային ոլորտում կատարվող բարեփոխումները դրանով չսահմանափակվեցին: Ըստ կատարված փոփոխությունների՝ 2020 թվականի հունվարի 1-ից եկամտային հարկի պրոգրեսիվ դրույքաչափից անցում կատարվեց միասնական՝ 23 տոկոս դրույքաչափի, որը ևս աստիճանաբար նվազելու է՝ 2023 թվականին հասնելով մինչև 20 տոկոս³: Փոփոխություն կատարվեց նաև շահութահարկի դրույքաչափում՝ 20 տոկոսի շեմից նվազեցվեց մինչև 18 տոկոս դրույքաչափ: Այդուհանդերձ, մեր հանրապետությունում շատ են հարկային արտոնությունները: Եվ պետք է նկատենք, որ հարկային արտոնության տրամադրումից հետո մեր հանրապետությունում չկա որևէ վերահսկիչ միջոցառում, որը կհետևեր, թե տրամադրված հարկային արտոնությունը ինչքանով է նպաստակային և արդյունավետ: Ուստի առաջիկա տարիների համար հարկային քաղաքականության տեսանկյունից պետք է առանձնակի կարևորություն տալ գործող հարկային արտոնությունների շրջանակի կրճատմանը, հարկման բազայի ընդլայնմանն ու ամրապնդմանը:

Գիտական նորույթը: Ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել Հայաստանի Հանրապետությունում արհեստակցական ուսումնարանների լայնածավալ վերաբացման ու դրանց հեղինակության բարձրացման, բուհ-

¹ Նույն տեղում:

² <https://home.kpmg/ru/ru/home/insights/2019/06/switzerland-tax-legislation-changes.html>

³ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=123322>, «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-68-Ն ՀՀ օրենքը

գիտահետազոտական ինստիտուտ-պետություն համակարգի խորացման, գիտության ֆինանսավորման ավելացման, հարկային արտոնությունների տրամադրման ծավալների կրճատման ու դրանք ավելի հասցեական դարձնելու, Հայաստան «տեղափոխվող» բիզնեսին նախնական հարկային արտոնությունների տրամադրման հետ կապված հիմնախնդիրները, որոնց արդյունավետ լուծումն առաջարկվում է Շվեյցարիայի տնտեսության զարգացման փորձի կիրարկմամբ:

Եզրակացություններ և առաջարկություններ

Շվեյցարիայի տնտեսությունն ընդհանուր առմամբ համեմատելի չէ Հայաստանի Հանրապետության տնտեսության հետ: Այնուամենայնիվ, Շվեյցարիայում կատարված բարեփոխումներից ստացված արդյունքները գնահատելով՝ կարող ենք դրանցից որոշները կիրառել նաև մեր հանրապետությունում: Մասնավորապես՝

1. Շվեյցարիայում գործազրկության մակարդակը բավականին ցածր է: Մա հիմնականում պատճառ է աշխատանքի նեղ մասնագիտացման: Այստեղ միջին մասնագիտական կրթություն ստացողների թիվը բավականին մեծ է: Դեռևս ուսումնառության տարիների ընթացքում ուսանողները պրակտիկա են անցնում իրենց ընտրած մասնագիտություններին համապատասխան գործունեություն վարող ձեռնարկություններում, ինչն էլ իր հերթին մեծացնում է հետաքրքրությունն ու շահագրգռվածությունը հետագայում գործազուրկ չմնալու առումով: Մեր հանրապետությունում արհեստակցական ուսումնարանները քիչ են: Երիտասարդների շրջանում հետաքրքրությունը դեպի միջին մասնագիտական կրթություն շատ ցածր է, քանի որ դրանց հեղինակությունն էլ է ցածր: Կարծում եմ, որ պետք է ավելի մեծ ուշադրություն դարձվի միջին մասնագիտական կրթության զարգացմանը, քանի որ աշխատաշուկայում նման մասնագետների կարիքը մեծ է:
2. Շվեյցարիայում կրթության կազմակերպումը պետության խնդիրն է: Հատկանշական է այն փաստը, որ բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդող դասախոսներն ու ուսանողների մեծ մասը զբաղվում են գիտությամբ, իսկ շվեյցարական բուհերին կից գործում է գիտահետազոտական գործունեության արդյունքների առևտրականացման հատուկ կենտրոն: Հայաստանի Հանրապետությունն ավելի կշահի, եթե կառավարությունը հետևի Շվեյցարիայի օրինակին՝ բարձրացնելով գիտության և կրթության ֆինանսավորումը, երկիրը ավելի գրավիչ դարձնելով գիտությամբ զբաղվելու համար և բարձրացնելով կրթական մակարդակը: Ճիշտ է, Հայաստանը համեմատելի չէ Շվեյցարիայի նման զարգացած երկրի հետ՝ կրթությանն ու գիտությանն ուղղված ահռելի միջոցների առումով, սակայն պետք է ընտրել արդյունավետ ուղի: Իսկ կրթության դերի բարձրացման գործում յուրաքանչյուր քաղաքացի պետք

է սկսի հենց իրենից՝ քաջ գիտակցելով, որ երրորդ հազարամյակի սկիզբը պահանջում է գիտելիքահենք հասարակություն, իսկ նման հասարակության հիմքը դրվում է հենց սկզբնական կրթությունից: Եվ կրթությունն է հետագա բարեկեցիկ կյանք ունենալու հիմնական գործոնը:

3. Շվեյցարիայում, Հայաստանի Հանրապետության համեմատ, գործում են հարկային ցածր դրույքաչափեր: Հարկային բարեփոխումների արդյունքում 2020 թ. հունվարի 1-ից չեղարկվեցին արտոնյալ հարկային ռեժիմներն, ու ներդրվեցին հատուկ «անցումային» կանոններ, կանտոնային մակարդակում նվազեցվեց կորպորացիաների եկամտահարկի դրույքաչափը, ինչպես նաև տեղի ունեցավ արտոնությունների սահմանափակում: Վերջինս պետք է կիրառել նաև մեր հանրապետությունում, քանի որ Հայաստանի Հանրապետությունում գործում են բազմաթիվ հարկային արտոնություններ, որոնք շատ ժամանակ տրամադրվում են չհիմնավորված: Հարկային արտոնությունների նվազեցումը կխնայի պետական բյուջեի միջոցների որոշակի մասը:
4. Շվեյցարիան այն երկրների շարքին է դասվում, որոնք ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների համար նպաստավոր պայմաններ են ստեղծում երկրում գործունեություն ծավալելու համար: Կարծում եմ, որ սա Հայաստանի Հանրապետության համար լավ օրինակ է, և պետք է «տեղափոխված» բիզնեսին նախնական հարկային արտոնությունների տրամադրել, ինչպես նաև ոչ ռեզիդենտների համար ավելի գրավիչ պայմաններ ստեղծել՝ դրանով իսկ նպաստելով ոչ ռեզիդենտների ներհոսք ՀՀ:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-68-Ն ՀՀ օրենքը
2. Авраменко С. Л., Швейцарский федерализм, 2002 г., 197 стр., <https://www.dissercat.com/content/shveitsarskii-federalizm>
3. Трофимова О. Е., Инвестиционная политика Швейцарии в России до и после введения санкций. Современная Европа. 2018, № 6 (85), с. 123-134
4. Юданов Ю. И., Особенности швейцарской предпринимательской модели. Современная Европа. 2003, № 1(13), с. 60-69. <http://www.sov-europe.ru/images/pdf/2003/1-2003/yudanov1-2003.pdf>:
5. Модернизация экономики и самоуправления в республиках Северного Кавказа и швейцарский опыт организации общества и экономики / Под общей редакцией Бабиц И.Л., Вирт Ю.В., Мартыновой М.Ю. – М.: ИЭА РАН, 2013. http://static.iea.ras.ru/books/Modernizatsia_ekonomiki_North_Caucasus.pdf

6. Кубли О., Швейцарское "чудо": одно государство, две официальных религии, четыре национальных языка, 26 кантонов, 2500 общин – и все это на 8 миллионов жителей и немногим более 40 тысяч квадратных километров. И однако это работает, причем даже очень неплохо!..
7. https://armstat.am/file/article/sv_03_20a_112.pdf
8. <https://home.kpmg/ru/ru/home/insights/2019/06/switzerland-tax-legislation-changes.html>
9. https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?name_desc=false
10. <https://www.s-ge.com/en/publication/fact-sheet/corporate-taxation>.
11. https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2020.pdf
12. <https://www.education-medelle.com/articles/visschee-obrazovanie-v-schvejcarii-politika-gosudarstva.html>
13. <https://www.worldbank.org/en/country/armenia/overview>
14. <https://interis.ch/ru/o-shveycarii/nalogooblozhenie-v-shveycarii>
15. <https://data.worldbank.org/country/CH>
16. <https://data.worldbank.org/indicator/AG.LND.TOTL.K2?locations=CH>
17. <https://data.worldbank.org/indicator/SP.POP.TOTL?locations=CH>
18. <https://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/country/s/switzerland/CHE.pdf>
19. <https://www.oecdbetterlifeindex.org/ru/countries/switzerland-ru/>
20. <https://www.kp.ru/daily/26357.5/3239498/>
21. https://www.s-ge.com/sites/default/files/publication/free/factsheet-corporate-taxation-switzerland-s-ge-en-2020_0.pdf
22. http://static.iea.ras.ru/books/Modernizatsia_ekonomiki_North_Caucasus.pdf

References

1. «Hayastani Hanrapetowt'yan harkayin o'rensgrqowm p'op'oxowt'yownner & lracowmner katarelow masin» HO'-266-N o'renqowm p'op'oxowt'yownner & lracowmner katarelow masin» HO'-338-N o'renqowm 1. «Hayastani Hanrapetowt'yan harkayin o'rensgrqowm p'op'oxowt'yownner & lracowmner katarelow masin» HO'-266-N o'renqowm p'op'oxowt'yownner & lracowmner katarelow masin» HO'-338-N o'renqowm p'op'oxowt'yown katarelow masin» HO'-68-N HHo'renqy' p'op'oxowt'yown katarelow masin» HO'-68-N HH o'renqy'
2. Avramenko S. L., Shvejcarskij federalizm, 2002 g., 197 str., <https://www.dissercat.com/content/shveitsarskii-federalizm>
3. Trofimova O.E. Investicionnaja politika Shvejcarii v Rossii do i posle vvedeniya sankcij. Sovremennaja Evropa. 2018. # 6 (85). S. 123-134.
4. Judanov Ju.I. Osobennosti shvejcarskoj predprinimatel'skoj modeli. Sovremennaja Evropa. 2003. # 1 (13). S. 60-69. <http://www.sov-europe.ru/images/pdf/2003/1-2003/yudanov1-2003.pdf>:

5. Modernizacija jekonomiki i samoupravljenja v republikah Severnogo Kavkaza i shvejcarskij opyt organizacii obshhestva i jekonomiki / Pod obshhej redakciej Babich I.L., Virt Ju.V., Martynovoj M.Ju. – M.: IJeA RAN, 2013.
http://static.iaa.ras.ru/books/Modernizatsia_ekonomiki_North_Caucasus.pdf
6. Kubli O. Shvejcarskoe "chudo": odno gosudarstvo, dve oficial'nyh religii, chetyre nacional'nyh jazyka, 26 kantonov, 2500 obshhin – i vse jeto na 8 millionov zhitelej i nemnogim bolee 40 tysjach kvadratnyh kilometrov. I odnako jeto rabotaet, prichem dazhe ochen' neploho!..
7. https://armstat.am/file/article/sv_03_20a_112.pdf
8. <https://home.kpmg/ru/ru/home/insights/2019/06/switzerland-tax-legislation-changes.html>
9. https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?name_desc=false
10. <https://www.s-ge.com/en/publication/fact-sheet/corporate-taxation>
11. https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2020.pdf
12. <https://www.education-medelle.com/articles/visschee-obrazovanie-v-schvejcarii-politika-gosudarstva.html>
13. <https://www.worldbank.org/en/country/armenia/overview>
14. <https://interis.ch/ru/o-shveycarii/nalogooblozhenie-v-shveycarii>
15. <https://data.worldbank.org/country/CH>
16. <https://data.worldbank.org/indicator/AG.LND.TOTL.K2?locations=CH>
17. <https://data.worldbank.org/indicator/SP.POP.TOTL?locations=CH>
18. <https://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/country/s/switzerland/CHHE.pdf>
19. <https://www.oecdbetterlifeindex.org/ru/countries/switzerland-ru/>
20. <https://www.kp.ru/daily/26357.5/3239498/>
21. https://www.s-ge.com/sites/default/files/publication/free/factsheet-corporate-taxation-switzerland-s-ge-en-2020_0.pdf
22. http://static.iaa.ras.ru/books/Modernizatsia_ekonomiki_North_Caucasus.pdf

ՇՎԵՅՑԱՐԻԱ. ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆԸ

ԵՎԳԵՆՅԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Համառոտագիր: Հայաստանի տնտեսության զարգացման ներկայիս փուլում շատ կարևոր է առաջավոր երկրների փորձի ուսումնասիրումն ու դրա արդյունավետ կիրառումը: Շվեյցարիայի տնտեսությունը համարվում է աշխարհում ամենակայուն տնտեսություններից մեկը: Շվեյցարիան զարգացած արդյունաբերական երկիր է՝ ինտենսիվ գյուղատնտեսությամբ և հանքանյութերի գրեթե լիակատար բացակայությամբ: Շվեյցարիան սերտ համագործակցում է արտաքին աշխարհի, առաջին հերթին՝ ԵՄ երկրների հետ: Սույն հոդվածի *նպատակն է* ուսումնասիրել Շվեյցարիայի տնտեսությունը, դրանում կատարված փոփո-

խությունները, հաջողության գրավականը և ներկայացնել դրանց տեղայնացման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում: Տվյալ նպատակին հասնելու համար հոդվածում դրված են հետևյալ խնդիրները. ուսումնասիրել Շվեյցարիայի պատմությունը, ներկայացնել երկրի հիմնական առանձնահատկությունները, վերլուծել տնտեսության հիմնական ճյուղերը, կատարել համեմատական վերլուծություն Հայաստանի Հանրապետության տնտեսության հետ, ներկայացնել Շվեյցարիայի տնտեսության հաջողության գրավականը դարձած փորձի ներդրման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում: Հետազոտության ընթացքում կատարվել են համակարգային և իրավիճակային, տնտեսավիճակագրական խմբավորումների, համեմատական և գործոնային վերլուծություններ:

Հոդվածի գիտական նորությունը: Ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել Հայաստանի Հանրապետությունում արհեստակցական ուսումնարանների լայնածավալ վերաբացման ու դրանց հեղինակության բարձրացման, բուհ-գիտահետազոտական ինստիտուտ-պետություն համակարգի խորացման, գիտության ֆինանսավորման ավելացման, հարկային արտոնությունների տրամադրման ծավալների կրճատման ու դրանք ավելի հասցեական դարձնելու, Հայաստան «տեղափոխվող» բիզնեսին նախնական հարկային արտոնությունների տրամադրման հետ կապված հիմնախնդիրները, որոնց արդյունավետ լուծումն առաջարկվում է Շվեյցարիայի տնտեսության զարգացման փորձի կիրարկմամբ:

Բանալի բաներ՝ տնտեսություն, զարգացում, կրթություն և գիտություն, հարկեր, հարկային համակարգ, արտոնություններ, հարկային դրույքաչափ, մրցակցություն

ШВЕЙЦАРИЯ. ЗАЛОГ СТАБИЛЬНОЙ ЭКОНОМИКИ

ЕВГЕНИЯ АКОПЯН

Аннотация. На нынешнем этапе экономического развития Армении очень важно изучать опыт передовых стран и эффективно его применять. Экономика Швейцарии считается одной из самых стабильных в мире. Швейцария - развитая индустриальная страна с интенсивным сельским хозяйством и почти полным отсутствием полезных ископаемых. Швейцария тесно сотрудничает с внешним миром, в первую очередь со странами Евросоюза. Цель данной статьи - изучить экономику Швейцарии, внесенные в нее изменения, залог успеха и представить возможности их локализации в Республике Армения. Для достижения этой цели нами поставлены следующие задачи: изучить историю Швейцарии, представить основные особенности страны, проанализировать основные отрасли экономики, провести сравнительный анализ с экономикой Республики Армения, представить возможности внедрения опыта Швейцарии в Республике Армения. В ходе исследования были выполнены систематико-ситуационные, экономико-статистические группировки, сравнительно-факторный анализ.

Научная новизна статьи. В результате исследования выявлены проблемы, связанные с широкомасштабным открытием профессиональных учебных заведений

(училищ) в Республике Армения и повышением их значимости, углублением системы университет-исследовательский институт-государство, увеличением финансирования науки, сокращением объема налоговых льгот и повышением их адресности, предоставлением предварительных налоговых льгот для предприятий, «переезжающих» в Армению, эффективное решение которых предлагается с применением опыта развития экономики Швейцарии.

Ключевые слова: экономика, развитие, образование и наука, налоги, налоговая система, льготы, налоговая ставка, конкуренция

SWITZERLAND. KEY TO A STABLE ECONOMY

YEVGENYA HAKOBYAN

Abstract. At the current stage of Armenia's economic development, it is very important to study the experience of advanced countries and effectively apply it. Switzerland's economy is considered one of the most stable in the world. Switzerland is a developed industrial country with intensive agriculture and an almost complete absence of minerals. Switzerland works closely with the outside world, primarily with the countries of the European Union. The purpose of this article is to study the Swiss economy, the changes made to it, the key to success, and to present the possibilities of their localization in the Republic of Armenia. To achieve this goal, I have set the following tasks: to study the history of Switzerland, to present the main features of the country, to analyze the main sectors of the economy, to carry out a comparative analysis with the economy of the Republic of Armenia, to present the possibilities of implementing the experience of Switzerland in the Republic of Armenia. In the course of the study, systematic-situational, economic and statistical groupings, comparative factor analysis were carried out.

Scientific novelty. The study identified problems associated with the large-scale opening of vocational educational institutions (schools) in the Republic of Armenia and increasing their role, deepening the university-research institute-state system, increasing funding for science, reducing the volume of tax incentives and improving their targeting, provision of preliminary tax incentives for enterprises "moving" to Armenia, the effective solution of which is proposed using the experience of the development of the Swiss economy.

Keywords: economy, development, education and science, taxes, tax system, incentives, tax rate, competition